ԼՈՒՍԱՊԱՅԾԱՌ ՄԱՐԴԸ

Այսօր ես մեծ հաճույքով եմ վերհիշում Աշճյան Սրբազանի հետ իմ ունեցած մի քանի հանդիպումները։

Շուրջ չորսուկես տասնամյակ ես զբաղվում եմ հայ ճարտարապետության պատմության ուսումնասիրությամբ։ Արդեն տպագրել էի մի քանի մենագրություն և շուրջ հինգ տարի էր, ինչ ավարտել էի հաջորդ, թերևս վերջին մենագրությունը, ուր անդրադառնում էի մի շարք վիճահարույց խնդիրների, մասնավորապես, հայ¬վրացական ճարտարապետական առնչակցությունների շուրջ։ Մուտք էինք գործել 21¬րդ դար, սակայն հասկանալի պատճառներով դեռևս մեծ դժվարություններ կային ծավալուն գրքեր պետական միջոցներով լույս աշխարհ բերելու գործում։ Դիմել էի տարբեր մարդկանց, մի քանիսը խոստացել էին աջակցել հովանավորներ գտնելու հարցում, սակայն տարիները գլորվում էին, իսկ սայլը տեղից չէր շարժվում։

Տարբեր տեղերից ես արդեն լսել էի Աշճյան Սրբազանի բարեգործությունների մասին, ուստի մի օր էլ որոշեցի ինքս դիմել։ Տիկնոջս հետ գնացինք Լեզվի ինստիտուտի շենքում գտնվող նրա գրասենյակը։ Սրբազանը ընդունեց հարգանքով ու սիրալիրությամբ, թերթեց մուտքագրած ձեռագրի տեքստը, ուշադիր կարդաց երկու էջանոց համառոտ ակնարկը, պատրաստակամ լսեց իմ բացատրությունները, մի քանի հարցեր տվեց, ապա խնդրեց իր մոտ թողնել նյութերն ու զանգահարել երկու շաբաթից։ Այդպես էլ արեցի։ Մեր հաջորդ հանդիպմանն իմ այն նկատառմանը, թե արդեն իննսուն տարեկան եմ, աչքիս լույսը պակասում է ու կուզեի մինչ «հեռավոր ճամփորդության» ելնելը տեսնել աշխատանքը տպագրված, նա բարեհամբյուր ու ժպտերես դեմքով ասաց, թե խոստանում է, որ կես տարի անց տպագիր գիրքը կդնի սեղանին։ Ճիշտն ասած, այնքան էլ չհավատացի, սակայն իր պահվածքով և խոսքուզրույցով այդ մարդը հավատ ու մեծ պատկառանք էր ներշնչում, ուստի և որոշեցի համբերությամբ լցվել ու սպասել։

Անցավ կես տարի ու ես տեղյակ էի, որ Սրբազանն իր խոսքի տերն է եղել՝ գտել է բարերար (Էդուարդ և Վերժին Մսըրլյաններ), ընթանում են խմբագրական աշխա-

տանքներ։ Մի քանի անգամ հետը զրուցել էի հեռախոսով, ու նա համբերատար ինձ հավաստիացնում էր, որ ամեն ինչ ընթանում է իր հունով։ Ու վերջապես եկավ բաղձալի պահը, երբ իմ տարիների աշխատանքը լույս տեսավ։ Ուրախությանս չափ չկար։ Այդ գիրքն ինձ համար կյանքի ուղեգիր էր ու, թերևս, դրանով ներարկված ավյունով է, որ ցայսօր կամ ու շնչում եմ։

Հայերս միշտ հպարտանում ենք մեր մշակույթով։ Սակայն այն միշտ էլ ինչ¬ինչ պատճառներով վտանգված է լինում ու կարիք է զգում ոչ միայն պետական օժանդակության։ Այդ կարևոր գործն իրենց վրա են վերցնում գիտության ու մշակույթի իսկական բարեկամները։ Նրանցից էր Աշճյան Սրբազանը։ Հայաստանյան շրջանի նրա մեկ տասնամյակից էլ պակաս գործունեության ընթացքում նրա օժանդակությամբ լույս տեսան տասնյակ, գուցե և մի քանի հարյուր աշխատություններ, շատ ու շատ մտավորականների համար կազմակերպվեցին ուխտագնացություններ Արևմտյան Հայաստան, նկարահանվեցին ու ցուցադրվեցին ֆիլմեր, կազմակերպվեցին գիտաժողովներ, իրականացվեցին տարիներով պլանավորված բազմաթիվ ձեռնարկումներ, վերականգնվեցին եկեղեցիներ։ Առանց չափազանցության կարող եմ ասել, որ գիտությանն ու մշակույթին նման ուղղորդված ու հետևողական բարեգործություն, նման նվիրում ես չէի հանդիպել առնվազն կես դար, եթե ոչ ավելին։ Իսկ որքան պլաններ ուներ Սրբազանը։ Ափսոս, հազար ափսոս, որ այդքան անժամանակ մեզանից հեռացավ այդ Պայծառ անձնավորությունը։

Տիրան Մարության

Հայաստանի վաստակավոր շինարար,
Ճարտարապետության դոկտոր

23 հոկտեմբերի 2005 թ